Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Պտղնիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Ֆիզիկա>>՝ 3 դասաժամ, <<Երաժշտություն>>՝ 3 դասաժամ, <<Կերպարվեստ>>՝ 4 դասաժամ, <<Արվեստ>>՝ 1 դասաժամ, <<Տեխնոլոգիա>>՝ 4 դասաժամ, <<Հասարակագիտություն>>՝ 3 դասաժամ, <<Տարրական դասարանների դասվար>>՝ 21 դասաժամ, <<Թվային գրագիտություն և համակարգչային գրագիտություն>>՝ 11 դասաժամ, <<Ինֆորմատիկա>> 1 դասաժամ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի ՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1),
2. 1 լուսանկար՝ 3x4 չափի,
3. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ / դիպլոմ
4. Անձը հաստատող փաստաթուղթ,
5. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
6. Ինքնակենսագրություն / Ձև 5/,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենի հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 25 -ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 11:00 – 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 14-ին՝ ժամը 15:00-ին, Կոտայքի մարզի Պտղնիի միջնակարգ դպրոցում՝ հասցե Կոտայքի մարզ գ. Պտղնի փողոց 2, շենք 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (091)69-64-44, հեռախոսահամարով: